ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

<< 02 >> հոկտեմբերի 2018թ. N 484-Լ

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԾԱԽՍԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 7-րդ հոդվածը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 743-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրության 18-րդ կետի 7-րդ և 20-րդ ենթակետերով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1" Հաստատել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության ծախսերի ֆինանսավորման վարչության կանոնադրությունը համաձայն հավելվածի:

2" Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Ա.ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի
«02» հոկտեմբերի 2018թ.
N 484-Լ հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) ծախսերի ֆինանսավորման վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) Նախարարության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է, որը կազմավորվել է Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 743-Լ որոշման համաձայն:

2. Վարչությունն իր գործունեությունն իրականացնելիս ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, օրենքների, այլ իրավական ակտերի և իր կանոնադրության հիման վրա:

3. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարը (այսուհետ՝ Նախարար) հաստատում է Վարչության կանոնադրությունը, այդ թվում՝ կառուցվածքը, և կանոնադրության մեջ կատարում փոփոխություններ:

II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

4"Վարչության հիմնական խնդիրներն են՝

1) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կատարման ոլորտում, իր իրավասությունների շրջանակներում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Նախարարությանը և գանձապետական համակարգին վերապահված լիազորությունների լիարժեք իրականացման ապահովումը.

2) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ծախսերի ֆինանսավորման արդյունավետ կազմակերպումը.

3) Ընթացիկ վերլուծությունների իրականացման միջոցով՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ծախսերի ցուցանիշների կատարողականի կանխատեսումների մակարդակի և ֆինանսական հոսքերի կառավարման արդյունավետության աճի ապահովումը:

III.ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

5. Վարչության գործառույթներն են՝

1) պետական բյուջեի ծախսերի ֆինանսավորման կազմակերպման շրջանակներում՝ բյուջեների կատարման ընթացակարգերը սահմանող իրավական ակտերի պահանջներին, բյուջետային ծախսերի դասակարգմանը, հաստատված ցուցանիշներին և եռամյակային համամասնությունների չափաքանակներին համապատասխան բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչների ծախսային ծրագրերի հաշիվներին միջոցների փոխանցման ապահովումը.

2) պետական բյուջեի ծախսային ծրագրերի ամենօրյա ռեժիմով ֆինանսավորման կազմակերպումը, այդ թվում՝ պետական բյուջեի ծախսային ծրագրերի ֆինանսավորման նպատակով բյուջետային հատկացումների կարգադրիչների կողմից վճարահաշվարկային ծրագիր ներմուծված հայտերի ուսումնասիրությունը, մշակումը, համադրումը, բյուջետային հատկացումների կարգադրիչների կողմից պետական բյուջեի ծախսային ծրագրերի գծով ստանձնած պարտավորությունների մշակումը, համադրումը առկա հայտերի հետ և ֆինանսավորման ենթակա ծախսերի ամփոփումը, պետական բյուջեի ֆինանսավորման նպատակով վճարային փաստաթղթերի հաստատումը.

3) պետական բյուջեից սպասարկվող ոլորտների գծով բյուջետային ծախսերի ֆինանսավորմանն առնչվող հարցերի շրջանակներում՝ տվյալ տարվա պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների իրականացման մասնակցությունը և շահագրգիռ ստորաբաժանումների հետ համագործակցությունը.

4) Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումներով հատկացված միջոցների գծով ֆինանսավորման կազմակերպումը, նշված իրավական ակտերով կատարված ֆինանսավորումների տվյալների հաշվառման իրականացումը, պարբերական և ըստ

անհրաժեշտության հաշվետվությունների և տեղեկանքների պատրաստումը, գործընթացի կարգավորմանն ուղղված այլ քայլերի իրականացումը.

5) իրականացման առանձնահատկություն պարունակող որոշ ծախսային ծրագրերի գծով ծախսերի ֆինանսավորման կազմակերպումը, նույն ծրագրերի գծով պարբերական և ըստ անհրաժեշտության՝ հաշվետվությունների և տեղեկանքների պատրաստումը.

6) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված, օրենսդրությամբ սահմանված որոշակի կատեգորիայի անձանց փոխհատուցման գումարների ֆինանսավորման կազմակերպումը, քաղաքացիներին՝ փոխհատուցված գումարների վերաբերյալ իրազեկման գրությունների պատրաստումը.

7) ֆինանսական հոսքերի կառավարման և ծրագրավորման շրջանակներում պետական բյուջեի կատարման ընթացքի վերաբերյալ քննարկումներին մասնակցությունը, տեղեկատվության փոխանակման միջոցով՝ ծախսային ծրագրերի ցուցանիշների կատարման վերաբերյալ կանխատեսումների ներկայացումը, պետական բյուջեի կատարման վերաբերյալ ընթացիկ, համեմատական և վերլուծական տեղեկանքների և նյութերի պատրաստումը.

8) բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչների կողմից ծախսային ծրագրերի թերակատարման վերաբերյալ ստացված բացատրագրերի ամփոփումը, պետական բյուջեի ծախսային մասի ծրագրային ցուցանիշներից շեղման գործոնների վերաբերյալ վերլուծությունները, ծախսային ծրագրերի կատարման ռիսկերի բացահայտումները, ընթացիկ իրավիճակի գնահատումը.

9) պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների շրջանակում իրականացվող գործընթացի կարգավորման նպատակով՝ իրավական ակտերի նախագծերի պատրաստումը, ներկայացված նախագծերի վերաբերյալ կարծիքի ներկայացումը, բյուջեների կատարման ընթացակարգերի կատարելագործման ուղղությամբ առաջարկությունների մշակումը և ներկայացումը.

10) համագործակցելով պատասխանատու ստորաբաժանումների հետ՝ բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչների կողմից ներկայացվող Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունների ցուցանիշների ճշգրտման և համապատասխանության ապահովման գործընթացին մասնակցությունը.

11) համագործակցելով պատասխանատու ստորաբաժանումների հետ՝ օրենքով սահմանված շրջանակներում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից Նախարարությանը և պետական կառավարման մարմիններին, ինչպես նաև օրենքով պետական կառավարման մարմիններին վերապահված իրավասության սահմաններում բյուջետային հատկացումների և այլ ցուցանիշների համապատասխանաբար վերաբաշխումների ու փոփոխությունների իրականացման և հաշվառման մասնակցությունը.

12) գաղտնի ընթացակարգով իրականացվող աշխատանքների կազմակերպումը, հանձնարարականների կատարումը և փաստաթղթաշրջանառությունը.

13) բյուջեների կատարումն ապահովող օրենսդրությամբ նախատեսված այլ միջոցառումների իրականացումը.

14) Նախարարության կանոնադրությամբ հաստատված գործառույթների իրականացումը.

15) Նախարարի և Նախարարության գլխավոր քարտուղարի (այսուհետ՝ Գլխավոր քարտուղար) այլ հանձնարարականների կատարումը:

IV. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

6. Վարչությունը ղեկավարում է Վարչության պետը, նրա բացակայության դեպքում՝ բաժինների պետերից մեկը՝ Վարչության պետի հանձնարարությամբ:

7. Վարչության պետը անմիջական հաշվետու է Նախարարին:

8. Վարչության գործունեության համակարգումը Նախարարի հրամանով կարող է վերապահվել Նախարարի տեղակալներից մեկին:

9. Վարչության պետին հանձնարարականներ և ցուցումներ տալիս է Նախարարը: Նախարարի հանձնարարությամբ հանձնարարականները կարող են փոխանցել իրենց համակարգման լիազորությունների շրջանակներում Նախարարի տեղակալը, Գլխավոր քարտուղարը:

10. Վարչության գործառույթների իրականացմամբ ստեղծված փաստաթղթերն ստորագրում է Վարչության պետը:

11. Վարչության բաժինների աշխատանքը ղեկավարում և կազմակերպում են բաժին-ների պետերը:

V. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

12. Վարչության կառուցվածքում ընդգրկվում են հետևյալ բաժինները՝

1) Ծախսերի ֆինանսավորման կազմակերպման բաժին.

2) Ծախսային ծրագրերի կատարման ընթացիկ վերլուծության բաժին :

13. Վարչության յուրաքանչյուր քաղաքացիական ծառայողի գործառույթները, իրավունքներն ու պարտականությունները, շփումներն ու հաշվետվողականությունը նկարագրվում և այդ գործառույթները արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ մասնագիտական գիտելիքները ու կոմպետենցիաները և կառավարման համակարգում տեղակայվածությունը սահմանվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրով (աշխատատեղի նկարագրով):